9921

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի կողմից 1932 թ. փետրվարի 27-ին)

334.7
Կ-21

Տպարան Նոր-Բայազետի տեղ. տնտ. բաժնի
Շրջվտ № 203 Տիրաժ 150 որ.

93181-ԱԲ

2010

334.7
Կ-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ

100 Հ
30/89

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի կողմից 1932 թ. փետրվարի 27-ին)

12001

Տպարան— Նոր-Բայազետի տեղ. տնտ. բաժնի
Շրջլիտ № 203. Տիրաժ 150 որ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ազգ. Գրադարան
Հայ. Ա. Մասիսյանի անվան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ և ՓՈԽԱԴԱՐՁ ՈՃՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ. Կենտգործկոմիյեվ ժողկոմխորհի կող մից 1912 թ. փետրվարի 27-ին)

1. Արհեստական և տնայնագործական արդյունաբերություն մեջ և այլ արհեստներում վոչ վարձու աշխատանքով զբաղվողների համար սոցիալական փոխադարձ ապահովագրությունը և փոխադարձ ոգնությունն իրականացնելու նպատակով հիմնվում են արհեստագործական և փոխադարձ ոգնության գանձարկղները։

2. Արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղի անդամ կարող են լինել՝

ա) արհեստական և տնայնագործական կոոպերատիվի ընկերությունները (արտելները).

բ) կոոպերատիվ ընկերությունները (արտելները), արհեստագործական—վարկային, արհեստագործական—գյուղատնտեսական (արտելատնտեսությունները), վարկային արհեստագործական - գյուղատնտեսական և խառն (միացյալ) ընկերությունները.

գ) աշխատավորական արտելները.

դ) կոոպերատիվ ընկերությունները (արտելները), վորոնք միացնում են վորսորդական արհեստով զբաղվող անձանց.

ե) 16 տարին լրացած անձինք, յերեխաներանք անձամբ զբաղվում են արհեստով և ունեն վոչ ավելի, քան մեկ աշակերտ, և ըստ գործող որենքների իրավունք ունեն

արհեստագործական և տնայնագործական ընկերությունների անդամ լինել.

զ) արհեստագործական և տնայնագործական կոոպերատիվ ընկերություններում (արտելներում) սովորող աշակերտները, եթե նրանք սոցիալական պարտադիր ապահովագրման յենթակա չեն։

3) Արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղի անդամ չեն կարող լինել ընտրական իրավունքից զրկվածները։

4) Արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի ցանցի մեջ մտնող բոլոր ընկերությունների անդամներն ու թեկնածուները պարտադիր կարգով յենթակա յեն ապահովագրման։

Գանձարկղի կազմի մեջ մտնող արհեստագործական և տնայնագործական կոոպերատիվ ընկերությունների անդամներն ու թեկնածուները և գանձարկղի անդամագրված անհատ արհեստավորները (հոդ. 2, կետ ե) համարվում են գանձակղի մասնակիցներ և համաձայն գանձարկղի կանոնադրության և ի զարգացումն այս կանոնադրության հրատարակված վորոշումների, կանոնների ու հրահանգների, ոգտվում են գանձարկղի կողմից սպասարկվելու իրավունքներով։

6. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղները հիմնվում են 3-րդ հոդ. ա և զ կետերում հիշված կազմակերպությունների միջոցով։

7. Գանձարկղները իրենց առաջ դրված խնդիրներն ավելի հաջող կերպով իրականացնելու համար կարող են կազմել փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղների հանրապետական միություն, վորպես գանձարկղների հանրապետական կենտրոն, Միություն կազմելու համար անհրաժեշտ է, վորնրա մեջ մտնող գանձարկղների թիվը 3-ից պակաս չլինի։

8. Մինչև փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղների հանրապետական միություն կազմելը հանրապետական գանձարկղների կանոնների դերը շրջանների նկատմամբ կատարում է «Հայաստանի արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղները» (Ցերեվանում) վորի ապահովագրական աշխատանքները իրագործում է քաղաքային և շրջանային գործակալությունների կամ լիազորների միջոցով։

9. Փոխադարձ ապահովագրության ասպարեզում գանձարկղը իրականացնում է հետևյալ նպատակները՝

ա) գանձարկղի անդամների և նրա ընտանիքի անդամներին ցույց են տալիս ամեն տեսակի բժշկական և պրոֆիլակտիկական ոգնություն. առողջապահության մարմինների միջոցով, համաձայն նրանց հետ կնքված պայմանագրերի, և թե՝ սեփական բժշկա-պրոֆիլակտիկական հիմնարկներ կազմակերպելու միջոցով.

բ) գանձարկղի անդամների ժամանակավոր անաշխատունակության (հիվանդության, հղիության, ընտանիքի հիվանդ անդամներին խնամելու, կարտիրնի այլ) դեպքում տալիս են նպաստներ.

գ) Գանձարկղների կին անդամներին և անդամների կանանց ծննդաբերության դեպքում տալիս են նպաստներ (մանկական հագուստեղեններ և սնունդ).

դ) գանձարկղի անդամների և նրանց ընտանիքի անդամների մահվան դեպքում տալիս են թաղման նպաստ։

10. Փոխադարձ ոգնության ասպարեզում գանձարկղները նպատակ ունեն՝

ա) տալ գանձարկղի անդամներին նպաստներ, տար-

բերային աղետների և այլ պատահարների հետևանքով առաջացած նյութական կարիքի դեպքում (հրդեհ, հեղեղ, գողություն և այլն).

բ) գանձարկղի անդամների սուր կարիքը վերացնելու, կամ հիվանդությունը կանխելու համար, տալ փոխատվություններ հատկապես այս նպատակով կազմակերպված հատուկ ֆոնդից.

գ) այլ նպաստներ իրենց անդամներին՝ գործազրկության դեպքում.

11. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղները կարող են նպաստներ, աշխատավարձ կամ աշխատավարձի մի մասը տալ գանձարկղի այն անդամներին, որոնք կանչվում են զինվորական ծառայության, կամ նախազորակոչային պատրաստության համար։

Այդ նպաստները տրվում են բանվորագյուղացիական կարմիր բանակ կանչվողներին ոգնություն ցույց տալու հատուկ ֆոնդից, որը գոյանում է գանձարկղին անդամագրվող արհեստակցական և տնայնագործական կոոպերատիվ ընկերությունների (արտելների) հատուկ մուծանքներից։

Այս ֆոնդը կարող է ծախսվել միայն անմիջական նպատակների համար (փոխադարձ սոցիալական ապահովագրության միջոցները պետք է ծախսվեն կարմիր բանակ զորակոչվողներին նպաստ կամ աշխատավարձ տալու համար։

12. գանձարկղները իրենց անդամների աշխատանքի պայմանները բարելավելու նպատակով կարող են իրենուրույն կերպով կատարել արհեստագործական և տնայնագործական կոոպերատիվ ընկերությունների ընդհանուր արհեստանոցներում և ձեռնարկություններում աշխատանքի պայմանների հետազոտությունը՝ պարզելու համար թե

արտելների կողմից ինչ չափով է կիրառվել արտադրական սանիտարիայի առաջապահության և տեխնիկական անվտանգության նաև կանանց ու անչափահասների աշխատանքի պաշտպանության վերաբերյալ կանոնները։

Այս աշխատանքները կիրառելու համար գանձարկղները իրավունք ունեն ընտրելու աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներ կամ լիազորներ։

13) Բացի 9-12 հոդ. հիշված սոցիալական փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության վերաբերյալ խնդիրներից, գանձարկղները կարող են՝

ա) միջոցներ ձեռք առնել գանձարկղի անդամների և նրանց ընտանիքի անդամների կենցաղային կարիքները հոգալու, մասնավորապես կազմակերպելու կենցաղային հանրայնացված սպասարկում (մսուրներ, մանկապարտեզներ, մանկական հրապարակներ և այլն)։

բ) գանձարկղի անդամներին և նրանց ընտանիքի անդամների մեջ կատարել սանիտարական լուսավորության վերաբերյալ աշխատանքներ.

գ) իրավաբանական ոգնություն ցույց տալ գանձարկղի անդամներին ու նրանց ընտանիքի անդամներին և առհասարակ ծավալել գանձարկղի նպատակներից բղխող աշխատանքներ։

14. Ցերեվանից և նրա շրջակայքից դուրս այս կանոնադրության 9-12 հոդվածներում հիշված գործունեությունը կատարվում են գործակալությունների միջոցով։

15. Գանձարկղների հանրապետական միության (կենտրոնների) խնդիրն է՝.

ա) փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության ամբողջ ցանցի մեջ մտնող գանձարկղների և գործակալությունների աշխատանքների ընդհանուր ղեկավարությունները.

բ) ապահովագրության տարիֆների և նորմաների վերաբերյալ կանոնների ու հրահանգների, նաև ամբողջ ցանցի գործունեության բոլոր ընագավառների վերաբերյալ ղեկավար նյութերի մշակումը.

գ) փոխադարձ ապահովագրության ցանցում ստացվող բոլոր միջոցների կարգավորումը, պահեստի և այլ տեսակի ֆոնդեր, դրամագլուխներ հիմնելը և նրանց վերաբերյալ կարգադրություններ անելը.

դ) փոխադարձ ապահովագրության ցանցի մեջ մտնող գանձարկղների և գործակալությունների աշխատանքի ծրագրի քննությունը և բժշկական ու բուժ. պրոֆիլակտիկական հիմնարկներ կազմակերպելը.

ե) նույն ցանցի մեջ մտնող գանձարկղների և գործակալությունների կողմից հաշմանդամության և ծերության, նաև նեցուկից զրկվելու դեպքերում անդամներին թոշակ նշանակելու վարաբերյալ հարուցված միջնորդությունների քննությունը, թոշակների նշանակումը և թոշակներն այլ սպասարկումով փոխարինելը.

զ) այլ գործունեության, վորը նպատակ ունի ծավալել փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գործը։

16. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղների միջոցները կազմում են՝

ա) գանձարկղի անդամների մուտքի վճարներից.

բ) ապահովագրական մուծանքներից, վորոնք գանձվում և փաստորեն ստացած ամսական աշխատավարձի կամ վորոշված կայուն յեկամուտի տոկոսային հարաբերությամբ.

գ) տույժերից, վորոնք գանձվում են ապահովագրական մուծանքներից ժամանակին չվճարելու դեպքում։

դ) գանձարկղի հատուկ մուծանքներից (կարմիր բանակ կանչվողների ապահովումը և այլն)։

ե) գանձարկղի գույքերից ստացվող յեկամուտներից.

զ) այս վորոշման 2-րդ հոդվածում հիշված ընկերությունների (արտելների) շահույթից տրվող հատկացումներից.

ը) գանձարկղի անդամների փոխոգնության ֆոնդին տրվող մուծումներից և այլն.

թ) այլ յեկամուտներից (տոկոսներից, դրամագլուխներից և այլն)։

17. Գանձարկղների հանրապետական միության (կենտրոնի) միջոցները կազմում են ապահովագրական ցանցի մեջ մտնող գանձարկղների և գործակալությունների պարբերական հատկացումներից պահեստի կենսաթոշակային և ընդհանուր կազմակերպչական ֆոնդերի համար։

Մինչև գանձարկղի հանրապետական միությունը կազմելը, գանձարկղային հանրապետական կենտրոնի միջոցները կազմում են կենտրոնական (Յերեվանի) գանձարկղի միջոցներից 16-րդ հոդ. նշված յեկամուտներից և այս հոդվածում հիշված հատկացումներից։

18. Մուտքի վճարների չափը սահմանում է գանձարկղի լիազորների ժողովը կամ գանձարկղի վարչությունը, գանձարկղի անդամների աշխատավարձի տոկոսային հարաբերությամբ։

19. Ապահովագրության ամսական նպաստների չափը վորոշվում է համաձայն հատուկ տարիֆների, վորոնք մշակվում են գանձարկղների հանրապետական միության կողմից Հայտնարկոոպի համաձայնությամբ։

20. Արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի ցանցի մեջ մտնող ընկերությունների (արտելների) անդամների թեկնածուների և բոլոր կոոպերացված տնայնագործների ապահովագրական մուծանքները վճա-

բում են արտելներն ու ընկերություններն իրենց միջոցներից, առանց աշխատավարձից պահումներ անելու։

21. Վոչ կոոպերացված (անհատ) տնայնագործներն ապահովագրման ժուծանքները վճարում են իրենց յեկամուտի տոկոսային հարաբերությամբ (յեկամուտի չափը վորոշում են գանձարկղի վարչությունը կամ գործակալությունը)։

22. Փոխադարձ ոգնության ֆոնդի ամսական ժուծանքները, ինչպես ընդհանուր արհեստանոցներում, նույնպես և տանն աշխատող կոոպերացված անդամները և վոչ կոոպերացված տնայնագործները վճարում են իրենց հաշվին։

23. Ապահովագրական ամսական ժուծանքները ժամանակին չվճարելու համար գանձարկղի կանոնադրությունով սահմանվում է տույժ, վորի ամսական չափը չպետք է չվճարված գումարի 2 տոկոսից ավելի լինի։

24. Ընկերություններն (արտելների) շահույթից տրվող հատկացումների չափը վորոշում է գանձարկղին անդամագրված կոոպերատիվ ընկերության ընդհանուր ժողովը կամ լիազորների ժողովը և հաստատվում է Հայտնարկոոպի կողմից։

25. Գանձարկղի կողմից կամովին հեռացողը կամ նրա շարքերից հեռացվողը պարտավոր է վճարել գանձարկղին իր բոլոր պարտքերը և գանձարկղի դրամագլխից կամ գույքից վորեվե մաս չի ստանում, բացառությամբ փոխադարձ ոգնության ֆոնդի գումարներից, վորոնց նկատմամբ գանձարկղի կանոնադրությունով կարող է թույլատրվել հետ դնել հեռացնողին կամ հեռացվողին հասանելիք գումարը համաձայն գործող որենսդրության։

26. Գանձարկղին անդամագրվող ընկերությունների (արտելների) վարչական մարմինները պարտավոր են՝

ա) գանձարկղի կողմից վորոշված ժամկետներում պարբերաբար ներկայացնել տեղեկանք արտելից հեռացող և արտելում նոր ընդունված անդամների մասին.

բ) գանձարկղի կողմից վորոշված ձևով և նշանակված ժամկետներում պարբերաբար ներկայացնել տեղեկություններ անդամների աշխատավարձի (յեկամուտի) չափի մասին.

գ) դրանցել «ա» և «բ» կետերում նշված տեղեկությունները.

դ) գանձարկղի կողմից լիազորված անձանց ներկայացնել արտելի գրքերը, հաշիվները և փաստաթղթերն այս հոդվածի «ա» և «բ» կետում նշված տեղեկությունները ստուգելու համար։

27. Գանձարկղի ինչպես և գանձարկղների հանրապետական միության (կենտրոնի) գործունեությունը ղեկավարում է գանձարկղի անդամների լիազորական ժողովը, գանձարկղի վարչության և պլենումի կողմից։ Ղեկավարող այդ մարմինները ընտրվում և գործում են գանձարկղի կանոնադրությամբ սահմանված կարգով։

Վարչության գործունեությունն ստուգելու համար կանոնադրության համաձայն ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով, վորի գործունեությունը նույնպես սահմանվում է կանոնադրությամբ։

28. Գործակալության գործունեությունը ղեկավարում է գանձարկղի անդամների շրջանային ընդհանուր ժողովը կամ լիազորների ժողովը և գանձարկղի վարչությունը։

29. Գանձարկղի գործունեությունն անմիջորեն ղեկավարելու համար վարչությունը կարող է իր անդամներից ընտրել նախագահություն։

Գործակալության գործունեության անմիջական ղեկավարությունը հանձնվում է լիազոր գործակալին։

30. Ղեկավար մարմինների մեջ չեն կարող ընտրվել ընտրական իրավունքներից զրկված անձինք, վորոնք ապարատում ևս չեն կարող վորևե պաշտոն ունենալ, սակայն ղեկավարող և վերահսկիչ մարմիններում կարող են ընտրվել 16—18 տարեկան անձինք, յեթե նրանց ընտրական իրավունք չունենալու միակ հիմքն անչափահաս լինելն է։

31. Գանձարկղի և նրա անդամների, ինչպես և գանձարկղների հանրապետական միության (կենտրոնի) և նրա կազմի մեջ մտնող գանձարկղների և գործակալությունների փոխհարաբերությունները կարգավորում են կանոնադրությունով և նրա հիման վրա գանձարկղի վարչական մարմինների կողմից ընդունված վորոշումներով և գանձարկղի հանրապետական կենտրոնի հրահանգներով։

32. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղի կանոնադրությունը պետք է համապատասխանի ՀՍՍՀ-ի Ժողտնտխորհի կողմից հրապարակված ու Հայտնարկոոպի և գանձարկղների հանրապետական կենտրոնի հետ համաձայնեցված որինակելի կանոնադրությամբ։

33. Գանձարկղների հանրապետական միության կանոնադրությունը հաստատում է ՀՍՍՀ-ի Ժողտնտխորհը համաձայնության գալով Հայտնարկոոպի հետ։

34. Մի շրջանի սահմաններում գործող գանձարկղը հիմնվում է հայտարարության կարգով, այն գանձարկղները, վորոնց գործունեությունն ընդգրկում են մի քանի շրջան, հիմնվում են թույլատվության կարգով Ժողտնտխորհի տնայնագործական կոմիտեյի և Հայտնարկոոպի կողմից հաստատված որինակելի կանոնադրության հիման վրա։

35. Գանձարկղների կանոնադրությունը տոմարագրվում են.

ա) շրջգործկոմի տեղական տնտեսության բաժնի միջոցով, յեթե գանձարկղի գործունեությունն ընդգրկում է մի շրջան.

բ) Ժողտնտխորհի տնայնագործական կոմիտեյի միջոցով, յեթե գանձարկղի գործունեությունը կատարվում է մի շրջանի սահմաններից դուրս։

36. Գանձարկղների հիմնվելու թույլատվությունը և տոմարագրումը կատարվում է ամեն անգամ արհեստակցական և տնայնագործական կոոպերացիայի կենտրոնի Հայտնարկոոպի հավանություն ստանալուց հետո։

37. Հայտարարության կարգով հիմնվող գանձարկղների կանոնադրության տեմարագրումը կարող է մերժվել, յեթե ներկայացված կանոնադրությունը հակասում է գործող որգաններին կամ որինակելի կանոնադրությանը։ Տոմարագրումը մերժելու դեպքում կարելի է բողոքել 7 որվա ընթացքում, համապատասխան շրջգործկոմին, իսկ Ժողտնտխորհի կոմիտեյի վորոշման դեմ՝ Ժողտնտխորհին, վորի վորոշումը վերջնական է։

38. Տոմարագրության վերաբերյալ հայտարարությունն ստորագրող մարմինների կողմից քննության պետք է առնվի հայտարարության տալու որից մի ամսվա ընթացքում, յեթե այդ ժամանակամիջոցում մերժելու մասին վորոշում չի կայանում, ապա գանձարկղի կանոնադրությունն անմիջապես տոմարագրվում է համապատասխան մատյաններով։

39. գանձարկղի կանոնադրության տոմարագրելու որից փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղը վայելում է իրական անձի իրավունքներ։

40. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղների և նրանց միության կանոնադրության մեջ մատնանշված պետք է լինի.

ա) կազմակերպության անունը, բ) նրա նպատակները, գործունեության շրջանը ու ժամանակամիջոցը, յեթե հիմնվում է վորոշ ժամանակով, գ) կազմակերպության անդամների կազմը, նրանց ընդունելու, հեռացնելու, հեռանալու պայմաններն ու կարգը, դ) գործունեության ձևը, ե) գանձարկղի միջոցները դրամագլուխները հիմնելու ու նրանց ոգտագործելու կարգը, զ) վարչական վերաստուգիչ մարմինների իրավունքներն ու պավտականությունները և նրանց ընտրության կարգը, ը) ընդհանուր և լիազորական ժողովների գումարելու կարգը, նրանց գործունեության պայմաններն ու իրավունքները, թ) կանոնադրության փոփոխելու կարգը, ժ) կազմակերպությունն լուծարքի յենթարկելու կարգը։

41. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղներ և գանձարկղների հանրապետական միությունը ինչպես և նրանց կողմից ամիջականորեն ոգտագործվող սանատորիաները, հանգստյան տները, կուլտուրական հիմնարկները, ճաշարաններն և այլ ձեռնարկությունները, վորոնք պահում են այս վորոշման 9-12 հոդվածներում նշված նպատակները իրականացնելու համար, ազատվում են տեղական բոլոր հարկերից և տուրքերից, ինչպես և պետական միասնական տուրքերից։

42. Տներ և շենքեր վարձելու, կոմունալ ծառայություններ և հողամասեր վարձելու նկատմամբ՝ գանձարկղը և գանձարկղների հանրապետական միությունը հավասարեցվում են պետական բյուջեյով պահվող հիմնարկներին։

43. Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղների և նրանց հանրապետական կենտրոնի պահանջները, վորոնք վերաբերվում են գանձարկղի անդամների պարտավորություններից բղխող գումարներին, ինչպես և այս վորոշման 10-րդ հոդ. սահմանված

վերադարձ գումարներին, իրացվում է պարտավորությունների վրա մակագրության կատարելու կարգով։

Փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղները և նրանց հանրապետական միությունը (կենտրոնը) ապահովագրության վերաբերյալ պահանջները բավարարելու հաջորդականության նկատմամբ հավասարեցվում են սոցիալական Պետապահովագրության պահանջներին, իսկ մնացյալ պահանջների նկատմամբ հավասարեցվում են պետական այլ մարմիններին։

44. Գանձարկղների և նրանց հանրապետական միության (կենտրոնի) ընդհանուր ղեկավարությունն իրականացվում է արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի միության Հայտնարկոոպի միջոցով։

Այդ ղեկավարության սահմաններն ու կարգը վորոշում են գանձարկղների հանրապետական միության (կենտրոնի) հետ համաձայնեցնելով։

45. Գանձարկղների և նրանց հանրապետական կենտրոնի գործունեության ընդհանուր հսկողությունն իրականացվում է Ժողտնտխորհի միջոցով։

46. Ժողտնտխորհը համաձայնության գալով արհեստագործական և տնայնագործական կոոպերացիայի կենտրոնի Հայտնարկոոպի և գանձարկղների հանրապետական միության (կենտրոնի) հետ, ի զարգացումն այս վորոշման տալիս է համապատասխան հրահանգներ։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահի
Տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՑԵԱՆ
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի
Տեղակալ՝ Ա. ՑԵՐԶՆԿՑԵԱՆ
Ի. Տ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղարի՝ Պ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ
Իսկականի հետ ճիշտ է քարտուղար՝ ՍՆԽՉՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

5323

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒՄ

					ՏՊՎԱԾ Է	ՊԻՏԻ ԿԱՐԴԱԼ
Եվ	3-րդ	տող	7-րդ	վերևից	արհեստական	— արհեստագործական
»	»	»	16-րդ	»	արհեստական	— արհեստագործական
»	5-րդ	»	5-րդ	»	կանոնների	— կենտրոնի
»	»	»	10-րդ	ներքևից	կարտիրնի յեվ	— կարանտինի յեվ
»	6 դ	»	13-դ	»	արհեստակ-ցական	— արհեստագործական
»	6-դ	»	9-դ	»	պետք է ծախ-սվեն	— չպետք է ծախսվեն
»	7-ուն	»	1-ին	վերևից	կիրառվել	— կիրառվում
«	»	»	2-դ	»	առաջապա-հության	— առողջապահության
»	»	»	5-դ	»	կիրառելու	— կատարելու
»	8-դ	»	15-դ	»	դեպքերում ան-դամներին	— դեպքերում ընտանի-քի անդամներին
»	13-դ	»	8-դ	»	արհեստակցա-կան	— արհեստագործական
»	»	»	15-դ	»	մերժելու դեպքում	— մերժելու դեմ
»	»	»	20 դ	»	ստորագրող	— տոմարագրող
»	»	»	25-դ	»	մայրաններով	— մայրաններում

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0044650

525u